

ՊԱՏՄԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՏԱ

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

ՍԵՔՐԵՏԱՐԻ

Նախնական պատմության բնագիրը

Պողոս Անանյանի մասնագիտորեն
առնչվող հոգու լուսե հիշատակին:

«Պատմության» կառուցվածքի երկպառակությունը հաշվի առնելով՝ բնագրի քննությունն սկսենք առաջաբանից: Ինչպես նշվեց, այն ունի ոչ միայն ծրագրային ու աղբյուրաբանական, այլև հիշատակարանային բնույթ, որովհետև որոշ տեղեկություններ է տալիս հեղինակի՝ Միջագետքում գտնվելու եւ Մարաբայի մատյանը ձեռք բերելու հանգամանքների մասին: Դրանով հանդերձ՝ առաջաբանը դարձել է սեբիոսագիտական ամենավիճելի հատվածը, այն ամենախոցելի տեղը, որը չի դիմանում ո՛չ քերականական, ո՛չ տրամաբանական, ո՛չ ժամանակագրական, ո՛չ էլ առհասարակ պատմամշակութաբանական քննության: Դրա պատճառը ե՛ր գրչական աղավաղումն է, ե՛ր հետին թվով կցմցված, հարմարեցված լինելն է:

Ինչեւէ, նախ պետք է վերականգնել քերականորեն տանելի այն վիճակը, որում եղել են գրչական աղավաղումից առաջ 2-րդ եւ 3-րդ պարբերությունները. «Անդ հայելով ի մատենս Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացոյ, զոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն, կամեցայ ձեզ գրուցակարգել զամս եւ զաւուրս թագաւորացն Հայոց եւ Պարթեւաց, զոր [ոմն ի նոցանէ] եգիտ դրոշմեալ ի վերայ արձանի ի Մծբին քաղաքի, յապարանսն Սանատրուկ արքայի, հանդէպ դրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայենիցն: Քանզի գսիւնս տաճարին այնորիկ խնդրեալ ի դուռն արքային Պարսից եւ բացեալ զաւերածն վասն սեանցն՝ աստ դիպան արձանագրին, դրոշմեալ ի վերայ վիմի յունարէն դպրութեամբ, քանզի այս ունէր վերնագիրն այսպէս» (էջ 47): Ստացվում է, որ կազմությամբ բարդ ստորադասական ծավալուն նախադասության մեջ երկու անգամ կիրառվել է «զոր» ստորադասական շաղկապը, ինչը եւ գրիչներից մեկին շփոթեցրել

է, եւ նա առաջին «գոր» շաղկապից հետո արտագրել է 2-րդ «գոր»-ին հաշորդող ստորադաս նախադասությունն այնպես, ինչպես հրատարակված է: Այս ուղղման արդյունքում վերանում են բնագրային հատվածի քերականական հակասությունները, մասնավորապես՝ Մարաբա Մծուրնացին իր գրած մատյանը չի գտնում արձանի վրա դրոշմված: Կամ երկրորդ անգամ հիշատակվող «զամն եւ զաւուրս» արտահայտությունը գրչին մեխանիկորեն թելադրել է նաեւ «հինգ» բառը, որն այստեղ ավելորդ ընդմիջարկություն է դառնում՝ անիմաստ եւ համատեքստից բոլորովին դուրս թռած:

Չեն վերանում, սակայն, տրամաբանական հակասությունները, մասնավորապես՝ հայ եւ պարթեւ վերոնշյալ թագավորների դիմաց Ագաթանգեղոսն իբր արձանագրում է «զամն առաջին թագաւորացն հայոց»՝ պարթեւներին մոռանալով, բայց բուն շարադրանքում տալիս է նաեւ նրանց անվանաշարքը: Արձանագրությանը հաջորդող տողից, ի դեպ, դրա մասին իմացվում է. «Զոր փոքր մի եւ ապա յիւրում տեղուոյն տեսցես զպատճենին» (էջ 47):

Անտրամաբանական է նաեւ այն, թե ինչպես կարող էր Մարաբա Մծուրնացին ապրել այնքան ուշ, որ Տրդատից հետո, ասենք օրինակ, Դ. դ. վերջերին փլված պալատի ավերակները, ենթադրենք, Ե. դ. կեսերին բացելու ժամանակ հայտնաբերել ագաթանգեղյան արձանագրությունը եւ գրի առնել, ու դեռ մոտ մեկուկես դար հետո՝ Զ. դ. վերջերին, իր աշակերտների միջոցով հասցնել մեր հեղինակին: Մինչդեռ Խորենացուց հայտնի է, որ Մար Աբա Կատինան ապրել է ամենաուշը Ք. ծ. ա. Բ. դ. սկզբներին: Թե՛ լռելյայն համարվում է, որ Մարաբա Մծուրնացին այլ անձ է, կամ եթե նույն անձն է, ապա Խորենացին նրան կեղծ ժամանակ է վերագրում՝ դարձնելով Վաղարշակի ժամանակակից ու նրա հանձնակատար: Մինչդեռ, ըստ հեղինակի, ոչ մի Վաղարշակ էլ չկար, իսկ Մարաբան իբր եղել է Զ. դ. երկրորդ կեսի հեղինակ: Մանավանդ, որ մեր հեղինակն առաջին անգամ չէ, որ ընդդիմախոսում է Խորենացուն եւ հերքում նրա տված տեղեկությունը:

Իրականում այս անգամ Խորենացու հետ ունեցած հերթական անհամաձայնության պատճառը գրչական աղավաղումն է, որի ուղղումով կվերանան տրամաբանական հիշյալ հակասությունները: Ակնհայտորեն երեւում է, որ Մծբինի արքունական արձանագրությունը հայտնաբերողը պետք է լինել ոչ թե Մարաբան, այլ՝ նրա աշակերտ-սերունդները, որոնցից մեկը, կեղծարարի տրամաբանությամբ, կարող էր այն գտնել ու զետեղել Մարաբայի մատյանում:

Այդ դեպքում առաջաբանի երկրորդ եւ երրորդ պարբերությունները կարդացվում են այսպես՝ ըստ ենթադրական բնագրի. «[Դեպ եղել ինձ ժամանակ մի կեալ ի Տիգրան ի սպասաւորութիւն նախարարաց մերոց]: Անդր հայելով ի մատեանս Մարաբայ փիլիսոփայի Մծուրնացույ, գոր իմ գտեալ ի Միջագետս ի նորին աշակերտացն, կամեցայ ձեզ գրուցակարգել զամն եւ

զատուրս թագաւորացն Հայոց եւ Պարթեւաց, զոր [ոմն ի նոցանէ] եգիտ դրոշմեալ ի վերայ արծանի ի Մծբին քաղաքի, յապարանսն Սանատրուկ արքայի, հանդէպ դրան արքունական տաճարին, ծածկեալ յաւերածի արքունական կայենիցն...»: Այսպիսով, վերանում են նաեւ ժամանակագրական սխալները, բայց չեն վերանում պատմամշակութային համատեքստի հետ եղած հակասությունները, որովհետեւ դրանք հեղինակի կողմից գիտակցված կեղծարարության արդյունք են: Ուստի այդ մասը պետք է դիտարկել՝ կեղծարարի «տրամաբանությունից» ու «ոճից» ելնելով:

Շատ պարզ երեւում է, որ հեղինակը, չնայած Խորենացուն հակաճառելու սկզբունքին, անցյալի իր ճանաչողությամբ պարտական է նրան, դրա համար էլ կրկնում է նրա ոչ պատմական տեղեկությունները: Մասնավորապես, որ Մծբինը եղել է հայոց Սանատրուկ արքայի նստավայրը, եւ որ Ագաթանգեղոսը եղել է Տրդատ արքայի քարտուղարը, որը եւս, ըստ մեր հեղինակի, արքունի դիվանի հիման վրա պատմություն է գրել եւ որոշ բաներ արձանագրել՝ ճշգրիտ պատճենելով Մար Աբա Կատինային (հմմտ. Մ. Խ., I, գլ. Ը., Թ.): Միջնադարյան կեղծարարի հայացքով՝ որքան տեղեկատվության աղբյուրը, նրա հայտնաբերման հանգամանքները մոտ լինեն «նախօրինակին», այնքան կեղծիքը ճշմարտանման կերեւաւ: Իսկ «նախօրինակի» եւ նրա մատուցման ոճի մատակարարը Խորենացին է, թեկուզ նա, որպէս վարժ խուզարկու, անցյալի պատմությունը շարադրել է իր «կամայական պետքերից» ելնելով: Իսկ մեր Սեբիոսը, դեմ լինելով այդ սկզբունքին, ցանկանում է անցյալը, ներկան եւ գալիքը տեսնել մի վախճանաբանական շղթայի մեջ ամբողջացյալ:

Կեղծարարի «ոճի» առաջին հատկանիշն անորոշությունն է. ոչ հստակ արտահայտություններ, անորոշ միջավայր (Միջագետք), ժամանակ, անորոշ աշակերտներ: Բայց եւ դրան հակառակ՝ հեղինակի ձգտումն է խիստ կոնկրետության պատրանք թողնելը, օրինակ՝ բառացի մեջ բերել արձանագրությունը՝ մոռանալով, որ այդ որոշակիությունը մատնելու է «կեղծարարի» հոգեբանությունը. «Ես՝ Ագաթանգեղոս գրիչ, գրեցի ի վերայ արծանիս այսորիկ իմով ձեռամբս զսմն առաջին թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջին Տրդատայ՝ առեալ ի դիվանէ արքունի» (էջ 47): Պատկերացնել կարելի է, թե ինչպէս չէր գրի իսկական արձանագրողը՝ բնավ կարիք չունենալով ասելու, որ ինքը գրիչ է, իր ձեռքով է գրում, Տրդատ քաջի հրամանով (հետագայի գնահատականը հայտնի է իրեն), արքունի դիվանից առնելով, ուստի եւ ավելորդ է ոչ միայն ամեն մի բառը, այլեւ արձանագրումն ինքնին: Այս առիթով, իհարկե, կարիք չկա անդրադառնալու բանասիրության մեջ եղած ամենատարբեր ու զարմանալի մեկնություններին, մանավանդ՝ դրանք քննադատելու, քանի որ գործ ունենք ոչ այնքան փաստարկների, որքան դյուրահավատության, աշխարհի զգայական ընկալման եւ այլ հոգեվիճակների հետ: Կարելի է, սակայն, ընդունել, որ այդ ամենի խորքային պատճառն այն է, որ միջնադարա-

գիտության մեջ կեղծիքի «ինստիտուտը», կեղծիքի «պոետիկան ու էսթետիկան», կեղծարարության մեխանիզմները դեռևս բավարար հետազոտված չեն: Առայժմ միայն արձանագրելի է, որ խնդրո առարկա աղբյուրաբանական կեղծիքը «կեղծարարության ժանրի» դասական նմուշներից է:

Այնուամենայնիվ, ինչ-որ մի իրական հենման կետ պետք է ունենալ կեղծիքը կառուցելու համար, որքան էլ այդ իրական հանգամանքը լինի երկրորդական: Հեղինակի համար այդ իրական հանգամանքը հավանաբար եղել է Միջագետքում երբեմն գտնվելը: Ինչպես տեղանունների ժողովրդական ստուգաբանական ավանդույթում ճշմարտության վերջնական երաշխիքը լինում է տվյալ «կենդանի» տեղանունը, այնպես էլ սույն կեղծարարության մեջ վերջնական ապացույցը ժամանակակիցների աչքին կարող էր լինել հեղինակի Միջագետքյան ճամփորդությունը: Եթե այս կետը չլիներ, ամեն ինչ սուտ կհամարվեր հեղինակի սերնդակիցների կողմից, որոնց էլ ուղղված է կեղծարարությունը: Միջագետքում լինելը հեղինակը մեկ անգամ էս օգտագործում է այլ նպատակով, որին դեռևս կանդրադառնանք: Իրոք, ուրեմն գործ ունենք պատմիչի կենսագրական փաստի հետ, որի հետքը «Պատմության» մեջ անուղղակիորեն մնացել է՝ դատելով պարսաշխարհի՝ ԺԱ. եւ ԺԲ. գլուխներում եղած նկարագրումից: Միջագետքում լինելու դեպքում կեղծիքի պայմանները դառնում են իդեալական. հեռավոր մայրաքաղաք Մծբին, հայոց արքունի տաճարի ավերակներ, այնտեղից տեղահանված սյուներ, մեկի վրա՝ արձանագրություն... Իրականում, այս ամենի մեջ միակ պատմականը, որ կարող է լինել, ավերակված տաճարի հղկված սյուների երկրորդային օգտագործումն է, որ տարածված էր հին աշխարհում եւ միջնադարում: Իսկ Մծբինը, հայտնի է, որ հարուստ էր նախկին մշակույթից ժառանգած պատրաստի շինանյութով, որի հետ, ի դեպ, կապվում է այդ տեղանվան ստուգաբանությունը. Նիսիբին՝ որպես թե սյուների քաղաք, Սյունակերտ: Բայց թե ո՞ր պարսիկ արքայի օրոք է տեղահանվել շինանյութը, կեղծարարին չի կարելի հարցնել:

Կեղծիքի թեման կշարունակվի նաեւ նախնական պատմության քննության մեջ. ամփոփելով առաջաբանի քննարկումը՝ թարգմանենք այն ամբողջովին:

«Եւ եղավ, որ [եւ] ոչ [իհարկե] վարժ խուզարկուի կամայական պետքերից [ելնելով], ձեռնարկեցի [գրով] դրոշմել անգիր ժամանակ[ներ]ը եւ նախնի քաջերի վիպասանությունը, հիշատակել ինչ-ինչ առասպելներ, եւ նույնի մեջ շարագրելով ասել հետո լինելիքը, համառոտ ցույց տալ արդի ժամանակներում վրա հասած աղետները՝ հինգ թագավորների տարիներն ու օրերը հիշատակելով:

[Այնպես եղավ, որ մեր նախարարներին սպասավորելու նպատակով միառժամանակ մնացի Մծբինում]:

Այնտեղ նայելով Մարաբա փիլիսոփա Մծուրնացու մատյանը, որ ես գտա Միջագետքում նրա աշակերտներից, կամեցա ձեզ [համար] զրուցակարգել հայ եւ պարթեւ թագավորների տարիներն ու օրերը, որ [աշակերտներից մեկը] գտավ արձանի վրա դրոշմված՝ Մծբին քաղաքում, Սանատրուկ արքայի ապարանքում, [այժմյան] արքունական տաճարի դռան դիմաց, արքունական կայանի ավերակ[ներ]ով ծածկված: Որովհետեւ այդ տաճարի սյուները պահանջեցին պարսից արքայի դռանը, եւ սյուների համար ավերակը բացելիս այստեղ հանդիպեց արձանագիրը՝ վեմի վրա դրոշմված, հունարեն դպրությամբ, որ ուներ այսպիսի վերնագիր. «Ես՝ Ագաթանգեղոս գրիչս, իմ ձեռով գրեցի այս արձանի վրա Հայոց առաջին թագավորների տարիները՝ առնելով արքունի դիվանից՝ քաջ Տրդատի հրամանով»: Մի փոքր [հետո] այդ պատճենն իր տեղում կտեսնես»:

Այսպիսով, անկախ ուղիղ փակագծերի մեջ դրված հավելումներից, բնագրի վերականգնումով ստացվում է մի կապակցված եւ ընթերցելի խոսք՝ ուղղված պատվիրատուին եւ ընթերցողին:

Արդեն ասվեց, որ նախնական կոչված պատմությունը թռուցիկ է, ուստի եւ ուղեկցվում է թվարկումներով ու ցանկերով: Ամենահամաձայնալի հատվածը Հայկի եւ Բելի ճակատամարտն է ու Հայկի սերունդների բնակեցումը՝ մինչեւ Արա Գեղեցիկ՝ ըստ Մարաբա Մծուրնացու, որ նույնն է Խորենացու հիշատակած Մար Աբա Կատինայի հետ:

Ինչպես հայտնի է հին ու միջնադարյան պատմությունից, Ք. ծ. ա. Ե.-Դ. - Ք. հ. Դ.-Ե. դարերում ձեռագիր շրջանառում էին աշխարհի տարբեր ժողովուրդների ծագումնաբանությանը վերաբերող անվավեր պատմություններ, որոնց հիմքում ընկած էին հնագույն առասպելապատում սյուժեներ՝ ավանդական բանահյուսական ժանրերով: Մտավորական քրիստոնյաների նպատակն էր ոչ հրեա ժողովուրդների, այդ թվում նաեւ հայերի ծագումը հաշտեցնել մարդկության ծագման աստվածաշնչյան հայեցակարգի հետ: Այդ ծագումնաբանական տեսությունը հայկական մասով դեռեւս Ե. դ. հայտնի էր Խորենացուն՝ ի դեմս ոմն Մար Աբա Կատինայի, ով իբր եղել է Հայքում առաջին Արշակունի թագավորի արքունիքի դպիր, որ Եդեսիայի դիվանից քաղել է հայոց ծննդաբանությունը եւ շարադրել հունարեն ու ասորերեն: Նա համարվել է ասորի, որովհետեւ Խորենացին, ելնելով Մար անվանումից, նրան դարձրել է ասորի, որը, ըստ բանասերների, չգիտես ինչու դատելով նույն «Մար»-ից՝ եղել է քրիստոնյա, հետեւաբար չէր կարող Քրիստոսից ավելի վաղ լինել¹: Թեկուզ, «մար» եզրը աշխարհիկ «տեր» իմաստով կարող էր կիրառվել նաեւ շատ ավելի վաղ դարերում:

Հետաքրքիրն այն է, որ պատմիչ Սեբիոսը, վկայակոչելով հիշյալ հայտնի

¹ Օրինակ՝ Գ. Սարգսյանի կարծիքը տե՛ս **Мовсес Хоренаци, История Армении**, пер. с древнеарм. яз., введение и примечания Г. Саркисяна, Ереван, 1990, էջ 223, ծան. 67:

աղբյուրը, այդ հարցում եւս երկխոսության մեջ է Խորենացու հետ՝ առանց տալու նրա ու նրա աղբյուրի՝ Մար Աբա Կատինայի անունը: Համեմատությունից պարզվել է, որ այդ աղբյուրը, երեւի իր առասպելաբանական նյութի ու անվավերական բնույթի պատճառով, ձեռագրերում շրջանառել է ազատ արտագրության սկզբունքով² եւ տվել է մի քանի տարբերակներ թե՛ հեղինակի ինքնության ու ժամանակի, թե՛ բովանդակության առումով: Պատմահայր Մովսես Խորենացու կողմից Մար Աբային վերագրվում է Նինվեի արքունի դիվանից հայկական նյութը գատելու եւ Հայոց արքունիք ներկայացնելու գործը: Իրականում վաղ քրիստոնեական դարերում եղած «ծննդաբանական» գրքերի օրինակով հայկական մասը կազմել է ուն Մարաբա Մծուրնացին, որ դարձյալ Խորենացու ազդեցությամբ ընկալվել է իբր ասորի «Տեր հայր», բայց դպիր-գրագիր լինելու համար կոչվել է նաեւ Կատիպա կամ փիլիսոփա: Այս անորոշ անվանումը հայախոս միջավայրում առաջ է բերել հատուկ անվան երկու տարբերակ՝ աղավաղումով՝ Մար Աբա Կատինա (ոչ Աբաս, որ հետագա է) եւ Մարաբա փիլիսոփա: Սեբիոսի եւ Խորենացու համեմատությունից երեւում է, որ երկու Մարաբաները, նման լինելով, անգամ լեզվական ընդհանրություններ ունենալով, որոշակիորեն տարբեր են: Սեբիոսի Մարաբան օժտված է ժողովրդական բանավոր վիպարվեստի հատկանիշներով, իսկ Խորենացու Պատմության մեջ այն լիովին կրում է պատմահոր մշակման կնիքը: Այնպես որ Ստ. Մալխասյանի պես ասել, թե Սեբիոսն օգտվել է միայն Խորենացու Պատմությունից, ճիշտ չէ³: Բայց ճիշտ չէ ոչ Հ. Մանանդյանի պատճառաբանմամբ, որովհետեւ ինչպես Ստ. Մալխասյանն էր ուզում Խորենացուց օգտվող գտնել ի դեմս Սեբիոսի, այնպես եւ Հ. Մանանդյանն էր մերժում Խորենացու գոյությունը վաղ դարերում: Իրականում Խորենացու «Պատմությունը» եղել է Սեբիոսի ձեռքի տակ, բայց իբրեւ՝ հակաճառության, երկխոսության եզր, ուստի եւ անունը չի տվել, նրան չի վկայակոչել՝ հակափաստարկներ բերելուց խուսափելու համար: Ինչ-որ տեղ գուցեւ պատմահոր անունը ցանկալի չի եղել պատվիրատու Մամիկոնյանների «մտավորական» շրջանակում, դրա համար նրա «Պատմությունը» չի հիշատակվում իբրեւ աղբյուր: Հիշենք, որ Փավստոս Բուզանդը Մամիկոնյաններին վերագրում է ժառանգական սպարապետություն դեռեւս Տրդատի ժամանակից, իսկ Խորենացին, մերժելով Բուզանդի գիրքը եւ նրա անունը չտալով, Մամիկոնյաններին առաջին անգամ սպարապետական պաշտոնի է կոչում եւ բարձակալական համակարգում նրանց նախարարական գահը բարձրացնում է 5-րդ տեղը միայն Սահակ Պարթեւի միջոցով Դ. դ. վերջին: Իր հերթին Ղազար Փարպեցին, որպես մամիկոնյանական պատմիչ, անտեսում

2 Տե՛ս Ա. Սահակյան, Հացունյաց խաչի պատմությունը եւ նրա տիպաբանությունը. ՊԲՀ, 1981, թ. 4, էջ 161-162:

3 Տե՛ս Ստ. Մալխասյան, Մ. Խորենացի-Սեբեոս. Պատմ.-Գրակ. ինստիտուտի «Տեղեկագիրք», գիրք 1:

է Խորենացու «Պատմությունը», թեկուզ օգտվում է նրանից առանց անունը տալու, եւ իրենից առաջ եղած պատմագիրներ է համարում Ագաթանգեղոսին ու Փավստոսին:

Մովսես Խորենացին, իր սկզբունքի համաձայն, փորձում է վիպական բանահյուսական նյութից պատմություն կերտել, իսկ Սեբիոսը նման խնդիր չունի, նա սկզբից անկեղծ է վարվում նյութի հետ՝ շտապելով այն, անտեսելու եւ շրջանցելու միջոցով, շուտ հասցնել վերջնամասին, որտեղ էլ պիտի կատարի իր «հակահարվածը»՝ Բագրատունիներին սերելով Հայկազուններից՝ համաձայն Փավստոս Բուզանդի «Պատմության» առաջին դպրության կամ նրա հիմքը կազմող Մարաբա փիլիսոփա Մծուրնացու մատյանի:

Ինչ էր մտածում Սեբիոսը՝ իմանալով, որ Խորենացու առաջին գրքի ԻԲ գլխում նույն այդ Մար Աբային է վերագրվում Բագրատունյաց հրեական ծագումը եւ, դեռ ավելին, պատմահայրը զգուշացնում է չհավատալ նրանց Հայկյան ծագումը պնդող անհավաստի ու հիմար խոսքերին: Նշանակում է, որ ըստ Մարաբա Մծուրնացու «Պատմության», իրոք, Բագրատունիները եղել են Հայկյան: Իսկ սա նշանակում է, որ ծագումնաբանական այդ պատմության հետ համաձայն չի եղել Խորենացին: Ուստի մնում է ենթադրել, որ Խորենացին ինքն է սրբագրել Մծուրնացու մատյանը՝ համաձայն պատվիրատու Սահակ Բագրատունու նոր տոհմաբանական վարկածի (Դ.-Ե. դդ.):

Պարզ է, որ իշխանական տներից ամենաշահագրգիռը Մամիկոնյան տոհմն էր, որը Սահակ Պարթևի հիմնած ավանդույթով հովանավորում էր հայոց գրական ու պատմագրական գործունեությունը, ինչպես վկայում են դարձաբանական (Ագաթանգեղայ պատմություն), վարքագրական (Կորյուն), ջատագովական (Եզնիկ), պատմա-վկայաբանական (Եղիշե), պատմագրական (Փավստոս) եւ այլ երկեր: Եւ եթե հաշվի առնենք, որ Փավստոս Բուզանդի «Պատմությունը» գրվել է Խորենացուց առաջ եւ բովանդակել է նաեւ առաջին դպրությունը (նախնական պատմություն), որը մեզ չի հասել, ապա կարելի է չկասկածել, որ Բագրատունիներին վերագրել են Հայկյան ծագում Փավստոսի առաջին դպրությամբ, որի համար աղբյուր է եղել Մարաբա Մծուրնացին: Ճիշտ է, հետագայում, այսինքն՝ Խորենացուց հետո եւ Սեբիոսից առաջ, առաջին դպրությունը Փավստոսի «Պատմությունից» դուրս է ընկել, բայց այն առանձին գրությամբ հասել է Սեբիոսին՝ որպես Մարաբա փիլիսոփա Մծուրնացու գործ, որից էլ օգտվել է Սեբիոսը:

Առկա տարբերությունների հիման վրա կարող ենք արձանագրել միեւնույն երկի առայժմ երեք տարբերակի փաստը. առաջին տարբերակ՝ ըստ Խորենացու, երկրորդ՝ ըստ Փավստոսի, երրորդ՝ ըստ Սեբիոսի: 2-րդ եւ 3-րդ տարբերակները նույնական ենք դիտում, քանի դեռ 2-րդը (Փավստոսի առաջին դպրությունը) կորած է: Այս երրորդ տարբերակում չի եղել նաեւ Վաղարշակը՝ որպես Արշակունիների հայկական ճյուղի սկզբնավորող եւ Մար

Աբայի պատմագիտական գործուղումը կազմակերպող ու պատվիրող: Ինչո՞ւ, որովհետեւ նա, ըստ առաջին տարբերակի (տե՛ս Մովսես Խորենացու «Պատմության» երկրորդ գրքի Գ. գլուխը), Բագարատին շնորհում է թագադիր ասպետի պատիվ՝ ժառանգաբար պահելու իրավունքով: Իսկ մյուս տարբերակներում Բագրատն է խոնարհաբար ծառայագրվում, նվերներով լիացնում ու դստերն էլ կնության տալիս Արշակին, որը նրան դարձնում է ասպետ, «որ էր իշխան եւ հրամանատար... որում էր իշխանություն տերութեանն այնորիկ» (էջ 54): Ուրեմն, իշխանություն՝ այն տերության մեջ, ոչ թե ժառանգաբար: Փաստորեն, Մամիկոնյանների տեսակետից խմբագրվում է ոչ միայն Բագրատունյաց տոհմաբանությունը, այլեւ նախարարական տան ունեցած պետական կառավարման ժառանգական իրավունքը: Ահա, մեր հեղինակին այս մրցակցային ոգին է ստիպել դիմելու Մարաբա Մծուրնացու նախնական պատմությանը եւ «վավերացնելու» նրա նոր տարբերակը:

Որ «նախնական պատմությունը» թռուցիկ շարադրելու քողարկված նպատակը Բագրատունիների տոհմաբանությունը սրբագրելն է, երեւում է նաեւ հետեւյալից. Սեբիոսը Հայկից մինչեւ Արա Գեղեցիկ, ըստ Մարաբա Մծուրնացու մատյանի, անցնելուց հետո նշում է, որ ասորեստանցիների տիրապետությունը Հայաստանի վրա շարունակվեց մինչեւ Սենեքերիմի մահը, որին հաջորդում է քերականորեն եւ իմաստաբանորեն մի անկապ ու անհասկանալի նախադասություն. «...Ասորեստանեայց թագավորքն տիրեցին մինչեւ ցմեռանելն Սենեքերիմայ, ապա ապստամբեցին յԱսորոց թագավորացն ծառայութիւնէ» (էջ 51): Պարզ չէ, թե Սենեքերիմի մահից հետո ովքեր փորձեցին ազատվել ասորեստանցիների թագավորների ծառայությունից: Բացի այդ, այս նախադասության շարունակությունը եւս իմաստով չի կապվում նախորդի հետ. «Եւ տիրէ ի վերայ նոցայ Զարեհ որդի որդոց Արամենակայ...» (էջ 51): Ակնհայտ է, որ բնագիրն աղճատված է, ուստի վերականգնելու համար պետք է համեմատել Խորենացու «Պատմության» համապատասխան հատվածի հետ (II, գլ. ԻԳ.), որտեղ խոսվում է նույն Մար Աբա Կատինայի անունից: Ըստ այդմ, Ասորեստանի Սենեքերիմ թագավորին սպանում են նրա որդիներ Ադրամելեքն ու Սանասարը եւ փախչում Հայաստան, որտեղ նրանց սերունդներից սերվում են Արծրունյաց եւ Գնունյաց նախարարական տները: Ահա, Սեբիոսի մոտ «ապստամբեցին» արտահայտությունը հուշում է, որ մինչեւ աղավաղվելը բնագիրն ունեցել է, ըստ նույն Մարաբա Մծուրնացու, վերոհիշյալ խորենացիական դրվագին նման մի տարբերակ, որին եւ տրամաբանորեն շարունակել է՝ «Եւ տիրէ ի վերայ նոցա» սկսվածքով նախադասությունը: Արծրունիների հիշատակումից հետո, փաստորեն, Սեբիոսն իսկույն անցնում է Բագրատունիներին:

Նրա շարադրանքում Բագրատունիների ծագումը ճշտելուց հետո ոչ մի այլ հարցի շուրջ չի խոսվում, եւ նա, կարծես նպատակին հասած լինելով,

սկսում է պատմել Արշակունյաց թագավորության հաստատման մասին. «Քանզի գտյն ճառէ ժամանակագիրն այդպէս, որպէս առաջիդ կայ» (էջ 52): Եւ իրոք, եթե չհաշվենք հաջորդող փոքր ընդմիջարկությունը (էջ 52, տ. 3-10), Սեբիոսն անմիջապէս մեր առաջ է դնում պարթեւների հակամակեդոնական ապստամբության մի տարբերակ, որը համապատասխանում է Խորենացու երկրորդ գրքի Բ. գլխին: Հետեւաբար, վերոնշյալ ժամանակագիրը միեւնոյն Մարաբա Մծուրնացին է, որքան էլ հայագետները նրա փոխարեն այլ անուններ ենթադրեն: Սեբիոսի եւ Խորենացու աղբյուրների նույնությունն այնքան միանշանակ է, որ անգամ հարկ չկա քննարկել այդ նույնությունը վիճարկող բանասերների կարծիքները⁴, որոնցով «ժամանակագիրը» հանիրավի նույնացվել է Եւսեբիոս Կեսարացու, Ագաթանգեղոսի կամ Փալստոս Բուզանդի հետ: Ինչ վերաբերում է ընդմիջարկված հատվածին («ի Դամասկոսէ ասեն» սկսվածքով), ապա պետք է նրա նախնական տեղը որոշել ըստ Մ. Ապարանեցու տվյալների, ինչպես նկատել է Գ. Աբգարյանը⁵, այսինքն՝ Մամիկոնյանների տոհմաբանական պատմությունից հետո, որին դեռ կանդրադառնանք: Ահա, առաջ բերելով Մարաբա Մծուրնացու «ճառը»՝ Սեբիոսն այն հասցնում է մինչեւ վերջ, մինչեւ կրտսեր Արշակունիների հաստատումը Հայաստանում: Դարձյալ համապատասխանելով Խորենացու Մար Աբա Կատինային՝ Բագրատունիներին օժտում է բարձր իշխանությամբ, ինչպես ասվեց, եւ դրանով, առանց հատուկ նշելու, ի տարբերություն Խորենացու («Աստանօր սպառնին բանք ծերունոյն Մար Աբայ Կատինայ» - II, գլ. Թ.), Սեբիոսը նույնպես ավարտում, սպառնում է Մարաբա Մծուրնացու տեղեկատվությունը եւ անցնում պարթեւ ու հայ Արշակունիների գահացանկին:

Ցանկը քաղում է «ագաթանգեղյան արձանագրությունից»: Եւ արձանագրության վերնագրին հաջորդող խոստումի համաձայն («յիւրում տեղւոջն տեսցես զպատճենն»), հասնելով նշյալ տեղին՝ թվարկում է երկու երկրի ցեղակից թագավորների անուններն իրենց գահատարիներով: Իրոք, երկու հակիրճ ցանկեր, որոնք միասին կազմում են հրատարակված բնագրի մոտ 15 տող (էջ 54, տ. 22-28, 34-36, էջ 55, տ. 1-6), այսինքն, ըստ կեղծարարի տրամաբանության, արձանագրելու համար միանգամայն հարմար ծավալ: Այստեղից երևում է, որ Սեբիոսի մի աղբյուրը Մարաբա Մծուրնացին է, որ գրել է մինչեւ Արշակունիների իշխանության հաստատումը Հայաստանում, ուստի համաձայն է Խորենացու հետ, մյուս աղբյուրը «ագաթանգեղյան արձանագրությունն» է, որի «տեղեկատու» ցանկը Մարաբա Մծուրնացու աշակերտները հետագայում հավելել են Մարաբայի «Մատյանում»: Այսինքն՝ պարզվեց, որ Սեբիոսի Մարաբա Մծուրնացին, ինչպես եւ Խորենացու Մար Աբա Կատինան, իրենցից օգտվողներին աղբյուր են ծառայել՝ պատմելու մինչեւ Ար-

4 Տե՛ս Գ. Աբգարյան, ծան. 37, էջ 200-201:

5 Տե՛ս անդ, էջ 38:

շակունիների հաստատումը Հայաստանում, հետեւաբար, Սեբիոսի համոզմամբ եւս, Մարաբա Մծուրնացին ապրել է Խորենացու նշած դարում, ուստի չէր կարող ներկա գտնվել «ագաթանգեղյան արձանագրության» հայտնաբերմանը: Ինչ-ինչ, «Կեղծարարի» տրամաբանությունը նման հակասական իրավիճակը պետք է բացառեր եւ, ըստ այդմ, արձանագրության տվյալները, այն է՝ գահացանկը, մտցնել «Մատյանի» մեջ ոչ թե նրա հեղինակ Մարաբայի ձեռքով, այլ նրա աշակերտների հետագա հավելվածագրումով: Իսկ դա նշանակում է, որ հիշատակարանային առաջաբանը այդ մասով եւս աղավաղվել է հետագա գրիչների կողմից, եւ արդյունքում ստացվել է, որ Մարաբա Մծուրնացին ապրել է ավելի ուշ ժամանակ, քան նշված է Խորենացու գրքում:

Այլապես պետք է համարել, որ Սեբիոսի տարբերակում «Միջագետյան Մատյանի» հեղինակ Մարաբա Մծուրնացին ապրել է Ագաթանգեղոսից շատ հետո, ուստի գրանցել է նաեւ վերջինիս անունով բացված արձանագրության տվյալները: Բայց այդ դեպքում Սեբիոսյան տարբերակով «Մատյանի» կեղծ հեղինակն իր հավաստիությամբ կզիջեր Խորենացու տարբերակում եղած կեղծ հեղինակին, մի բան, որ Սեբիոսին ձեռնառու չէր լինի: Սեբիոսին պետք էր, որ իր աղբյուրը Բագրատունիներին բխեցնի Հայկազուններից եւ նրանց բարձր իշխանությամբ օժտի Արշակունի առաջին թագավորի հետ խնամիանալու շնորհիվ՝ առանց ժառանգության իրավունքի: Այդ բանը եթե ասեր ոչ թե ժամանակակից կամ ականատես հեղինակը, այլ ուշ շրջանում ապրած մեկը, հավաստի ու տպավորիչ չէր լինի: Ընդհակառակը, եթե դա ասում է ականատես Մարաբա Մծուրնացին, ուրեմն ստացվում է, որ Խորենացին ինքն է փոխել Մար Աբա Կատինայի ասածը հօգուտ Բագրատունիների հրեական ծագման: Դա էլ հենց Սեբիոսի «լուռ» նպատակն է. թագավորական զարմից գրկել Բագրատունիներին, նրանց բարձրացնող եւ ժառանգական իրավունքներ շնորհող Վաղարշակին հանել ասպարեզից, առաջին Արշակունի համարել Արշակին: Սա է «Նախնական պատմության» մեջ Սեբիոսի խմբագրական միջամտության արդյունքը:

Սակայն, Սեբիոսի «Պատմության» մեջ հավանաբար որեւէ գիտուն գրչի թեթեւ ձեռքով Վաղարշակը մի կարճ հիշատակումով դարձել է Արշակին արքայակից. «Արդ, թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ... ի վերայ Հայաստան երկրի, ի Մրժուին քաղաքի եղբարք իւրով Վաղարշակաւ, զոր թագաւորեցոյց Հայաստան աշխարհիս ամս ԽԲ. (42)» (էջ 54): Ինչո՞ւ: Քերականապես ստացվում է, որ Արշակ Փոքրը թագավորեցնում է իր եղբորը՝ որպէս արքայակցի, բայց պարզ չէ, թե 42 տարվա գահակալումը վերաբերում է Արշակի՞ն, Վաղարշակի՞ն, թե՛ երկուսին միացյալ: Ըստ Խորենացու՝ առաջինը թագավորում է Վաղարշակը՝ 22 տարի, որին հաջորդում է նրա որդի Արշակը՝ 13 տարի, որոնց գումարը նույնպես չի անում 42 տարի: Ուստի ճիշտ է թվում վե-

րորերյալ «քաղաքական նպատակադրումը», այն է՝ Սեբիոսին տրված ծրագրային պատվերը, հաշվի առնելով՝ ընդունել, որ «եղբարք իւրով Վաղարշակաւ» արտահայտությունը հետագա գրչի հավելումն է՝ քաղված Խորենացու համապատասխան հատվածից: Այսինքն՝ Սեբիոսը լրիվ բացառել է Վաղարշակի ներկայությունը հատուկ նպատակով, եւ այդ գահացանկը վավերացրել ու ամրապնդել է մի ավելի մեծ պատմական «հեղինակությամբ», որ է Տրդատի գրիչ Ագաթանգեղոսը: Իսկ հետագայում ամենայն հավանականությամբ նույն գրիչը, որ Խորենացու եւ Ստ. Ասողիկի հիման վրա ավելացրել է Սեբիոսի Գ. գլուխը («Արդ, թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր...»), նկատած լինելով տարածայնությունը հեղինակավոր պատմիչների հետ, փորձել է մեղմել այն՝ ավելացնելով Վաղարշակի անունը եւ փաստորեն դարձնելով նրան արքայակից⁶:

Դեռ ավելին՝ այդ անհայտ գիտուն գրիչը, տեսնելով, որ հայ Արշակունիների ցանկը հասնում է մինչեւ Խոսրով, ըստ Սեբիոսի ճշմարիտ «կեղծարար տրամաբանության», ինքը շարունակում է այն՝ Խորենացու գրքի հիման վրա՝ հասցնելով մինչեւ Պապ: Բայց այդտեղ ընդհատում է՝ որոշելով մի առանձին հատվածով մեջ բերել «հաւաստի եւ ճշմարիտ մատենագրաց» գահացանկերը: Յավոք, այդ ավելացված հատվածի վերջին մասը, այն է՝ հայոց գահացանկը, հետագայում դուրս է ընկել: Այն հաջորդում էր Արտաշիր Սասանյանի հեղաշրջման մասին տեղեկացնող նախադասությանը, որի վերջին բառը կիսատ է մնացել («աւրինակին» բառի առաջին կեսի վրա (աւրին...), բայց բանասերները վերականգնել են Ստ. Ասողիկի համապատասխան հատվածի հիման վրա. «...թագաւորէ ինքն, եւ յետ նորա պայազատք նորին զնոյն ձեւ աւրինակին» (էջ 56)⁷: Կամ էլ կարելի է այլ կերպ պատկերացնել անհայտ գրչի միջամտությունը, նա Վաղարշակի անունը ավելացնելուց հետո հայոց գահացանկը նույնությամբ արտագրել է մինչեւ վերջ, այսինքն՝ մինչեւ Խոսրով, բայց վերջինիս գահատարիների թիվն ուղղել է ըստ Խորենացու՝ «...ամս ԽԸ.» (48 եւ ոչ թե 51 տարի, ինչպես գրում է Սեբիոսը Ե. գլխում, էջ 58): Բացի այդ, Տրդատի պատվերով արձանագրող Ագաթանգեղոսը, ըստ կեղծարարի տրամաբանության, չպետք է ունենար Տրդատի գահատարիները, բայց մեր գիտուն գրիչը դա էլ է ավելացրել դարձյալ ըստ Խորենացու՝ «ամս ԾԶ.» (56 տարի եւ ոչ թե 70, ինչպես գիտի Սեբիոսն իր Ե. գլխի եռաշար ցանկում, էջ 50-59): Որից հետո գրիչը որոշել է ներմուծել «գլուխ Գ.» հատվածը՝ վերնագրում հիշեցնելով, որ ինքը երկրորդում է այդ մասը, ընթերցողին ավելի հավաստի «գորդի ի հաւրէ ճանաչել» տալու համար: Ավելի պարզ՝

6 Տե՛ն Գ. Աբգարյան, 8ա, թ. 66: Այս կերպ միայն պատկերացնելու դեպքում կարող ենք գերծ մնալ հայ բանասիրության մեջ այդ հարցի առթիվ արված բազում անհիմն ենթադրություններից:

7 Տե՛ն նշվ. աշխ., ծան. 74:

թվում է, թե ընդմիջարկողը չէր կարող իրեն սահմանազատել բնագրից, բայց, այդուհանդերձ, եղել են բանասերներ, որոնք այս գրչական ընդմիջարկումը վերագրել են Սեբիոսին՝ հաշվի չառնելով, որ դրանով հեղինակը կհակասեր ինքն իրեն:

Ասացինք, որ այս գիտուն գրչի հավելումը վերջից պակասավոր է մեզ հասել, քանի որ հայոց գահացանկը ներկայացնող հատվածը կորել է: Հնարավոր է, որ այդ կորած մասի մի հատվածը, այն է՝ Խոսրով-Տրդատից մինչև Պապ թագավոր, պատահաբար կամ թյուրիմացաբար հայտնվել է «ազաթանգեղյան արձանագրության» վերջում՝ իբր նրա շարունակություն: Վերը նշվեց, որ այդ անվանաշարքը (Տրդատից-Պապ) կարող էր հայտնվել նաև գրչի խմբագրական միջամտության արդյունքում: Թե ո՞րն է ավելի հավանական, դժվար է ասել: Կարելի էր այն է, որ դրա հեղինակն ընդմիջարկող գրիչն է, եւ դրա լավագույն ապացույցը խորենացիական գահատարիների ամօրյությունն է: Դրանում առավել կհամոզվենք, եթե գահակալական տարիների տարբերությունները դրսևորվեն նաև մյուս թագավորների դեպքում: Այսպես՝ Մովսես Խորենացու վրա հիմնվելով, ընդմիջարկողը գրում է. «Ապա Խոսրով որդի Տրդատայ՝ ամս Թ.: Տիրան որդի Խոսրովայ՝ ամս ԽԸ.: Արշակ որդի Տիրանայ՝ ամս Լ.: Շապուհ արքայ Պարսից՝ ամս ԺԲ.: Պապ որդի Արշակայ՝ ամս Է.» (էջ 55): Միակ շեղումը Խորենացուց Տիրանի 48 տարին է. 11-ի փոխարեն շփոթմամբ գրվել է Մեծ Խոսրովի տարիների թիվը: Նույն թագավորներին Սեբիոսը եռաշարք ցանկում վերագրում է հետևյալ թվերը. Խոսրով Փոքր՝ 17 տարի, Տիրան՝ 12, Արշակ՝ 49, Պապ՝ 13 (էջ 59, 61): Ստացվում է, որ ընդմիջարկողն իր ուղղումները կատարել է մինչև եռաշար ցանկին հասնելը, որտեղ եղած գահատարիներն արդեն չի ուղղում երկրորդ անգամ: Բայց այդ ցանկում (գլուխ Ե.) գրիչն այնուամենայնիվ մի ընդմիջարկում անում է. երբ հռոմեական կայսրերի շարքը հասնում է Յուլիանոս Ուրացողին, գրիչն ավելացնելով պարզաբանում է. «Սա որդի է քեռ Մեծին Կոստանդիանոսի... ի նոյն ատուրս երանելին Աթանաս հալածեցաւ յԱրիանոսացն, զոր Սոկրատն պատմէ...» մինչև տ. 27 (էջ 60): Այսինքն՝ եթե ընդմիջարկողի մասը բնագրից մտովի հանենք, էջ 55-ում կմնան բնագրին հարազատ 1-6 տողերը՝ մյուս մանր միջամտությունները չհաշված:

Այսպիսով, «ազաթանգեղոսյան արձանագրի» ուժով Սեբիոսը փորձում է ուղղել Մարաբյան նախնական պատմության ոչ միայն խորենացիական, այլև փալստոսյան տարբերակները. Խորենացու դեպքում ժխտում է Վաղարշակի գոյությունը՝ տեղը դնելով Արշակին, Փալստոսի դեպքում ընդունում է, որ Հայքում առաջին Արշակունի թագավորի անունը Արշակ է, բայց նրան համարում է Իրանի Արշակ թագավորի որդի, ոչ թե եղբայր:

Մամիկոնյանների տոհմաբանությունը

Ներսես Ալիկյանի բազմաբեղուն
հոգու մշտավառ հիշատակին:

Բագրատունիների տոհմաբանական ճշգրտումները նախորդ էջերում պետք է շարունակվեն Մամիկոնյանների տոհմաբանությամբ, որովհետև Մեբիոսն այդ ամենը գրում է միասնական մի «քաղաքական նկատառումով»՝ ցույց տալով, որ այդ ժամանակի նշանավոր տոհմը Հայաստանում Մամիկոնյաններն են, որ կապվում են հեռավոր ճենաց թագավորական ընտանիքի հետ: Իսկ Բագրատունիները, ընդհակառակը, ունեն տեղական, ուստի եւ ոչ թագավորական ծագում: Այստեղ տեղին է նշել Մեբիոսի նախնական պատմության մեջ դիտվող այն միտումը, ըստ որի՝ Հայաստանում առաջին անգամ թագավորական իշխանություն է հաստատվել Արշակունիների կողմից, իսկ մինչ այդ Հայաստանը, իբր, թագավորություն չի ունեցել (հմմտ. H. Март, էջ 281): Ի դեպ, Մեբիոսյան այս դիտարկումը հակառակ է Մովսես Խորենացու հայացքին, ըստ որի՝ Հայաստանը թագավորություն է դառնում դեռեւս Հայկյանների օրոք, եւ պատմահայրը թվարկում է Հայկազուն թագավորների անունները մի առանձին հպարտությամբ: Նախնական պատմության մեջ նշածս երկու հակադիր ընթերցումները ցույց են տալիս, որ Ե. դ. մտավորական շրջանակում իշխող կարծիքի համաձայն՝ Հայքում վաղ դարերից ի վեր եղել է սեփական թագավորություն, որը հետագայում ընդհատվել է, իսկ Է. դարում իշխող կարծիքի համաձայն՝ Հայքում թագավորությունը ներդրվել է դրսից՝ օտար թագավորական տոհմերի, տվյալ դեպքում՝ Արշակունիների կողմից: Հետեւաբար, այսուհետ եւս պետք է շարունակվի դրսեկ թագավորական տոհմերով, տվյալ դեպքում՝ լուրջ հավակնորդի հայտ ներկայացրած Մամիկոնյաններով:

Ի դեպ, թագավորական ծագումնաբանություն պետք է ոչ միայն անհրաժեշտ պահին թագավորական գահին հավակնելու, այլեւ առհասարակ, նախարարական աստիճանակարգում ավելի պատվավոր տոհմ երեւալու համար: Այդ է պատճառը, որ մի շարք նախարարական տներ ներտոհմային ավանդույթի շրջանակում իրենց վերագրում էին օտար թագավորական ծագումնաբանություն, օրինակ՝ Արծրունիները, Կամսարականները, Գնունիները եւ այլն: Սակայն, հիշյալ ժամանակաշրջանում նրանց «ծագումն» այնքան քաղաքական հնչողություն չունեւ, որքան Բագրատունիների թագավորական տոհմաբանությունը ոչ միայն ներտոհմային ավանդույթի, այլեւ Խորենացու «Հայոց Պատմության» համաձայն: Նշանակում է «տոհմաբանական» բանավեճ կար դեռեւս Ե. դարում, որը շարունակվում է նաեւ 200 տարի անց: Դեռ

ավելին, ըստ Խորենացու վկայության՝ Հրաչյայի կողմից Հայաստան բերված Շամբատը հրեաների առաջնորդներից է, որ ազատագրվում է Նաբուգոդոնոսորի գերությունից եւ Հայքում սերում Բագրատունիների տոհմը (ՄԽ, ՀՊ, I, ԻԲ.): Անուղղակիորեն ստացվում է, որ եթե Արշակունիները սերում էին Արարահամի հարճից, ապա Բագրատունիները սերում էին նրա օրինական կնոջից, ինչը վերջիններիս առավել պատվով էր օժտում անգամ Արշակունիների նկատմամբ:

Ահա, ուրեմն է. դ. երկրորդ կեսին հարկավոր էր հերքել ու ցրել ոչ միայն բագրատունիական գերազանցության պատրանքը, այլեւ ընդունել ու հաստատել Մամիկոնյանների առավել գերազանց տոհմաբանական պատմությունը, որն իբր ընդմիջարկվել է Խորենացու կողմից: Մեզ հասած լեգենդի երկու տարբերակի համեմատումից երևում է, որ բանավոր ավանդույթում ազատ գոյավարելուց զատ (Դ.-Ջ. դդ.), այն արժանացել է գրական երկու մշակման, մեկը՝ Խորենացու, մյուսը՝ Մեբիոսի կողմից: Մեբիոսը գրել է, ասես, ի պատասխան խորենացիական տարբերակի:

Ահա սյուժետային համադրման ամփոփ պատկերը.

Պատմիչները	Մեբիոս (գլ. Դ.)	Խորենացի (II 2Ա., 2Դ.)
1. Մամիկոնյան նախնին	Մամիկ եւ Կոնակ	Մամգոն
2. Փախուստի պատճառը	Արքայի հետ կռիվ հա- նուն գահի	Եղբոր զրպարտություն արքայի մոտ
3. Փախուստի տեղը	Պարթևստան - Հայք	Պարսք - Հայք
4. Հովանավորը	Արտավան - Խոսրով	Շապուհ - Տրդատ
5. Նախարարական շնոր- հի ստացում	Սպարապետության միջոցով	դավադիր սպանության միջոցով
6. Աղբյուրը	«Ճենաց հրեշտակ» «Ճենաց գուսանք»	«ասեն»

Իհարկե, կան շատ այլ տարբերություններ եւս, բայց այստեղ ընդգծվել են երկու տարբերակում առկա «միտումնավոր փոփոխությունները»: Ենթադրյալ բանավոր ավանդապատումի հիմքում ընկած է տվյալ վայրում տվյալ տոհմի վերաբնակման բանահյուսական մոտիվը, որով շաղախված կամ հյուսված են անգամ ԺԹ.-Ի. դդ. ներքին միգրացիայի արդյունքում առաջ եկած գյուղերի շատ տոհմաբանական ավանդություններ: Ըստ այդ բանահյուսական մոտիվի՝ **հերոսը** (տոհմի նախնի, երկու եղբայր եւ այլն) **նախկին բնակավայրից** (հեռու կամ մոտ երկիր, գյուղ կամ այլ գավառ), **հեռանում** է (փախչում է, հալածվում է) **անհաղթահարելի իրավիճակի պատճառով**

(վտանգ, դավադրություն, սպանություն, հիվանդություն եւ այլն) եւ **հայտնվում է նոր բնակավայրում** (գյուղ, քաղաք, երկիր) **որպես հիմնադիր եւ/կամ տոհմի սկզբնավորող:**

Բերված պյուժետային սխեմայում տեղավորվում է նաեւ նոր բնակավայրի ընտրության մոտիվը, որը նույնպես առկա է Մամիկոնյանների տոհմաբանական լեգենդում՝ որպես ապահով վայրի որոնում կամ երրորդ ուժի ապավինում: Իսկ թե ճանաչողականից բացի երեւո՞ւմ է, թե ինչ այլ միտում ու գործառնություն է ձեռք բերում տվյալ տոհմաբանական պատումը, կախված է պատմելու հանգամանքներից, պատումի մանրամասներից, մշակման յուրահատուկ ոճից ու մեթոդից: Արդեն իսկ նման հատուկ մշակման կնիքն է կրում բերված երկու գրավոր տարբերակների բնավոր աղբյուրը՝ Մամիկոնյանների իշխանական միջավայրում պատմված ու հղկված տոհմաբանական ավանդությունը: Դա երեւում է մի շարք վիպական տարրերից, որոնք ընդհանուր են մշակված երկու տարբերակի համար: Դրանցից են, օրինակ՝ «Ճենքակուր» թագավորը, նրա կողմից պատերազմի սպառնալիքը պարթեւ կամ պարս թագավորներին, փախստականին հովանավորելու վերաբերյալ սրանց տված երդումը, Մեծ Հայքը որպես աքսորավայր ներկայացնելը եւ այլն: Նշված բնավոր մշակումից առաջ ի՞նչ տեսք է ունեցել տոհմի սկզբնավորման ու նրա բնակության տեղի ընտրության բանահյուսական մոտիվների հիման վրա հյուսված Մամիկոնյանական տոհմաբանական ավանդությունը՝ դժվար է ասել: Միայն որոշ կռահումների հնարավորություն կարող է տալ լեգենդի պատմական հիմքերի բացահայտումը՝ պայմանով, որ դրանք համադրվեն վիպական «ընդհանուր տեղիների հետ (Loca communia) եւ օգնեն վերականգնելու ժողովրդական ստուգաբանության առարկա դարձած եւ վիպականացած իրողությունները:

Խորենացու «Պատմությունից» (III, գլ. ԾԱ.) հայտնի է, որ Մամիկոնյանները սպարապետություն ստացան Դ. դ. վերջերին՝ Սահակ Պարթևի միջնորդությամբ, որով եւ նախարարական աստիճանակարգում գրավեցին հինգերորդ գահը: Մինչ այդ նրանք եղել են արքունական տարբեր ծառայությունների մեջ, այդ թվում նաեւ թագավորի զինակիր, թիկնազորի պետ եւ այլն: Նրանք, փաստորեն, պատմական ասպարեզ են իջել Տրդատի ժամանակ եւ աստիճանական առաջխաղացմամբ, մեծ վաստակի ու համբավի հասնելով, ընդարձակել են իրենց կալվածքները ողջ Հայաստանում: Սակայն լուրջ դերակատարում են ստացել գահակալական համակարգում 5-րդ աստիճանին հասնելուց հետո, երբ հզորացան թե՛ քաղաքականապես, թե՛ տնտեսապես՝ ժառանգելով Սահակ Պարթևի, հետեւաբար էւ Գրիգոր Լուսավորչի տոհմի ողջ սեփականությունը՝ շարժական թե՛ անշարժ գույքով: Իսկ սկզբնապես, Տրդատի օրոք, նրանց կալվածքները գտնվում էին Տայքի նահանգում, որը

հետագայում արքունական ծառայությանը զուգընթաց, ամբողջովին անցավ Մամիկոնյանների բազմացող ենթատոհմերի ձեռքը: Կարելի է ասել, որ Ե. դարը Մամիկոնյանների վերելքի ժամանակն էր, եւ իզուր չէ ենթադրել՝ տոհմաբանական պատմությունը, որ անկասկած եղել է նաեւ Դ. դարում, որակական փոփոխման ու խմբագրման է ենթարկվել Ե. դարում՝ իրենց վերելքին ու հզորացմանը համապատասխան, հատկապես Արշակունիների անկումից հետո: Ե. դ. 40-ական թվականներին Մամիկոնյանների համահայկական դերի հետ սկսեց ձեւավորվել նաեւ նրանց համահայկական շահը, որի թելադրանքով էլ գլխավորեցին եկեղեցա-քաղաքական մաքառումի երկու հզոր դրսեւորումները (449-451 եւ 482-484 թթ.), ստանձնեցին եկեղեցական կյանքի կարգավորումն ու քրիստոնյա հասարակության կազմակերպումը: Բնական է, որ Մամիկոնյաններն իրենց նոր դերին համապատասխան պետք է հավակնեին նաեւ գերագույն հոգեւոր իշխանության: Այդ հավակնությունը առաջին անգամ հայտնվեց Սահակ Պարթևի մահից հետո, երբ Մաշտոցի հեղինակավոր աջակցությամբ կաթողիկոսական տեղապահ դարձավ Հովսեփ Վայոցձորեցին կամ Հողոցնեցին: Համազասպ Մամիկոնյանի եւ Սահականուշ Պարթևի որդիները՝ Վարդանը, Հմայակը եւ Համազասպանը, լինելով իրենց պապի ժառանգորդները, փորձում էին ձեռք բերել նաեւ կաթողիկոսական գահի ժառանգորդական իրավունքը: Այդ հարցում նրանք ունեին թե՛ կողմնակիցներ՝ համախոհ նախարարներ (օր.՝ Կամսարականները), թե՛ ընդդիմացողներ՝ այլախոհ նախարարներ (օր.՝ Բագրատունիները): Այնպես որ Ե. դ. երկրորդ կեսին հասարակական կարծիքը կիսվեց երկու մասի, եթե անտեսենք չեզոք կողմին, որը նույնպես գոյություն ուներ: Ճիշտ է, Գրիգոր Լուսավորչի տոհմի սեփականության հետ Մամիկոնյաններին չհաջողվեց ժառանգել նաեւ կաթողիկոսական աթոռի գահակալման իրավունքը, որին ընդդիմացան մյուս երեւելի նախարարական տները, բայց եւ այնպես, գնալով նույնանում էին Հայ Եկեղեցու՝ ի դեմս կաթողիկոսական աթոռի ու կից միաբանության եւ Մամիկոնյանների տոհմական շահերը: Ե. դարից մեզ հասած միակ այլընտրանքային պատմագրական երկը, որն ունի ոչ մամիկոնյանական տեսակետ, Մովսես Խորենացու «Հայոց պատմությունն» է, որն էլ պահպանել է կաթողիկոսական աթոռի հետագա ճակատագրի շուրջ ծավալված քննարկումների հետքը: Երբ իշխանները, Խորենացու համաձայն, դիմում են ծեր Սահակին՝ նորից կաթողիկոսանալու խնդրանքով ու նրան խոստանում են ապահովել իր ժառանգների հետագա գահակալման իրավունքը, Սահակը չի համաձայնում. «Այլ նա ոչ առնոյր յանձն... պատմեաց գտեսիլն, որ յառաջ քան զբազում ժամանակս երեւոյթացաւ նմա... Զոր լուեալ նախարարացն եւ գիտացեալ, թէ յաստուածային հրամանէ դադարեաց յազգէ նորա քահանայապետութիւնն՝

յարտասուս հարեալ... թոյլ ետուն նմա»⁸: Տեսիլքում թոռների հավակնությունը մերժվում է պապի անունից:

Արդեն նշված այն փաստը, որ Ե. դ. վերջերից մինչև Է. դ. վերջերը կաթողիկոսացած Մամիկոնյաններն ավելի շատ էին, քան ոչ Մամիկոնյան կաթողիկոսները միասին վերցրած, նշանակում է, որ Մամիկոնյան տոհմն իր ունեցած ռազմական, տնտեսական ու քաղաքական ազդեցությամբ, ինչպես նաև արտաքին հարաբերություններում գրաված ծանրակշիռ դերով, կարողանում էր եթե ոչ *de jure*, ապա գոնե *de facto* հասարակությանն ընդունել տալ կաթողիկոսական գահի իր թեկնածուներին: Եկեղեցին, իր հերթին դառնալով որոշակի քաղաքական շահի կրող ու հետեւորդ, ի դեմս Մամիկոնյանների ու նրանց համախոհ-համաշահ նախարարական տների, տեսնում էր իր շահի երաշխավորներին: Պատահական չէ, որ Հայ Եկեղեցու կողմից ընդունված հայկական սրբադասերը կրում են Մամիկոնյանների անունները՝ Վաչեյանք, Վարդանանք, Ս. Հմայակ, Ս. Շուշանիկ: Փաստորեն, ինչպես ասվեց, իրոք անտեսանելի չէր այն միտումը, որով Հայ Եկեղեցու եւ Մամիկոնյան նախարարական տան շահերը համընկնումից աստիճանաբար շարժվում էին դեպի նույնացում: Այդ միտումին կարելի է հետեւել Ե. դ. երկրորդ կեսից մինչև Է. դ. վերջերը, երբ ի հայտ են գալիս հայոց քաղաքական ու եկեղեցական պատմությունն ամփոփող երկեր՝ որպես Մամիկոնյանների գաղափարական-քաղաքական շահի արտահայտիչներ: Այդ պատմագրական պատվերի առաջին իրագործումը «Ազաթանգեղայ պատմութիւնն» էր, որի հերոսներն են Ս. Գրիգորն ու Տրդատ թագավորը, երկրորդը Փավստոս Բուզանդի «Հայոց պատմությունն» էր, որի հերոսներն են արդեն Ս. Գրիգորի ժառանգները՝ որպես կաթողիկոսներ ու Մամիկոնյան իշխանները՝ որպես սպարապետներ: Վերջինիս մեջ թագավորական իշխանության դերը երկրորդական է, այն էլ ծառայեցված Մամիկոնյան հերոսների առաքինությունների բացահայտմանն ու ընդգծմանը: Նույն պատվերի հաջորդ իրագործողն էր Ղազար Փարպեցին, որի «Պատմության» հերոսներն էին Սահակ Պարթևը եւ նրա թոռն ու ծոռը՝ Վարդան եւ Վահան Մամիկոնյանները, իսկ վերջին իրագործողը Մեբիոսն է, որի «Պատմության» հերոսները, կայսրերին զուգահեռ, Հայոց իշխանն ու Կաթողիկոսն են՝ նույն Մամիկոնյան տոհմից: Կարելի է կարծել, որ Զ. դ. քաղաքական պատվերով հատուկ պատմագրական երկ չի ծնվում ոչ թե այն պատճառով, որ մարել էին թագավորական հավակնությունները հայ իշխանական շրջանակներում, այլ այն պատճառով, որ հայոց գահը վերականգնելու համար նպաստավոր ու հուսադրող արտաքին քաղաքական պայմաններ ու ազդակներ չկային, որոնց համապատասխան էլ, բնականաբար, անաշխույժ ու լուռ էին հավակնորդ ուժերը:

⁸ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, III, ԿԶ.:

Այժմ տեսնենք, թե Մամիկոնյան տոհմի վերելքին զուգահեռ ինչպես է փոփոխվում ու վերապատմվում նրա ծագումնաբանական պատմությունը Դ.-Է. դդ. ընթացքում: Հարցի հայագիտական անդրադարձերը⁹ զանց առնելով՝ խուսափում ենք կոնկրետ կարծիքներ ներկայացնելուց ու քննարկելուց, որովհետև նախընտրելի է ավելի կարճ ուղին՝ անուղղակի բանավեճը:

Ինչպես վերը նշվեց, Մամիկոնյան տոհմի ծագումնաբանական պատմությունը բանավոր ձեւավորման փուլում էր դեռեւս Դ. դ. II կեսին, երբ դեռ տոհմը Հայոց գահացանկում եւ նախարարական երեւելի տների շարքում աչքի չէր ընկնում: Ահա իր համեստ հասարակական դիրքին ու արքունական ծառայությանը պետք է համապատասխաներ նաեւ նրա ներտոհմային ծագումնաբանական ավանդությունը, որքան էլ վերջինս լիներ երեւակայածին:

Դատելով տոհմանվան *-հասն* ածանցից, պետք է կարծել, որ այն, Դ. դ. հայերենի համար լինելով նորաբանություն, դրվել է իրոք նոր կազմվող ցեղանվան վրա, ինչպես եւ *-սկսան* ածանցով կազմված ցեղանունները (օր.՝ Կամսարական եւ այլն): Այնպես որ պատմական իրողություն է համարվում տոհմաբանական լեզբների այն դրվագը, որում Մամիկոնյան նախնին ծառայության է անցնում Հայոց արքունիքում Տրդատ Մեծի օրոք: Ի դեպ, *-հասն* ածանցը, դրվելով նախնու անվան վրա, բառին հաղորդել է զավակի, որդու իմաստ, տվյալ դեպքում՝ Մամիկոնի որդի: Ըստ այդմ՝ Սահակ Պարթևի թոռներից մեկին կոչում են հոր՝ Համազասպ Մամիկոնյանի անունով՝ Համազասպյան, երեւի Ե. դ. սկզբներին: Ի տարբերություն հայոց ավանդական տոհմանունների *-ունի* ածանցի (Արծրունի, Բագրատունի եւ այլն)՝ *-հասն* ածանցը կիրառվում է ոչ միայն անձնանուններ ու ցեղանուններ, այլեւ սերում, ծագում, անջատում, առանձնացում, պատկանելություն, բաղադրություն արտահայտող բառեր կազմելիս, (օր.՝ ծովեան, ժամանակեան, տիտանեան, արեւելեան, միջագետեան, երեքթեան եւ այլն): Պետք է կարծել, որ հասարակ անուններից նոր իմաստներ *-հասն* ածանցով ստացվել են դեռեւս նախագրաբարյան հայերենում, որի հնագույն վկայություններ կարելի է համարել սեռականի եւ բացառականի հոլովակազմիչները՝ *-են*, *-ան* (ծովեան – ծովեն, ամառնեան – ամառնան եւ այլն), որոնք միեւնույն *-հասն* երկինջունի պարզեցման տարբերակներն են: Հետեւաբար *-հասն* ածանցի միայն հատկանվանակերտ, տվյալ դեպքում՝ ցեղանվանակերտ իմաստն է եղել իրանական նորաբանություն

9 Տե՛ս Ն. Ադոնց, «Հայոց նախնական պատմությունը» Սեբեոսի երկում եւ նրա աղբյուրները Մովսես Խորենացու եւ Փավստոս Բուզանդի երկափրությունների հետ, Երկեր, հ. Բ., Երեւան, 2006, էջ 275-278, որտեղ Ն. Ադոնցը հարցը փակում է հետևյալ կերպ. «Եթե չինական ծագումը քիչ է հավանական, ապա այն պարտադիր էլ չէ: Բազմաթիվ ցեղեր ու ժողովուրդներ էին բնակվում հայերի հարևանությամբ արեւելքում. երկպառակտչական խռովությունների հետեւանքով որեւէ մի իշխանական տոհմ կարող էր վանվել Հայաստան»։ Էջ 278: Գ. Աբգարյան, Մամիկոնյանների գրույցի հնագույն աղբյուրները հայ մատենագրության մեջ (Բուզանդարանի կորած դպրությունների կապակցությամբ)։ Բանբեր Մատենադարանի, թիվ 7, Երեւան, 1964, էջ 237-269. Պ. Անանյան, նշվ. աշխ., էջ 69-70, 100-102:

Դ.-Ե. դդ. հայերենում, որն սկզբնապես կյանքի է կոչվել արքունիքի ու նրան հարող վերնախավի լեզվում, որից էլ անցել է ավելի լայն ժողովրդախոսակցական լեզվին՝ կազմելով արդի ազգանունների ամենատարածված ձեռքը:

Իսկ ի՞նչ դատողության տեղիք է տալիս Մամիկոնյան ցեղանվան հիմքը՝ Մամիկոն, Մամիկո, Մամիգո, Մամգո տարբերակներով:

Միանգամից աչքի է զարնում անվան կովկասալեզվյան բնույթը՝ Մամ+ի-գո, որպես Մամ–ի նվազական, փաղաքշական արտահայտություն, փոքրիկ Մամ, որի հայերեն համարժեքն է հայր+իկ: Ուրեմն, տոհմի նախնին որեւէ կովկասյան լեզվով կոչվել է Մամիգո, որը հայախոս միջավայրում ստանում է վերջընթեր հնչյուն՝ Մամիգոն կամ Մամիկոն՝ դրանով իսկ փոքր-ինչ հեռանալով փոխատու լեզվից: Կարելի է ճշգրիտ ասել, թե որն է այդ լեզուն, եթե նկատի առնենք, որ Մամիկոնյան տոհմի սկզբնական հայրենական կալվածքները եղել են Տայքի նահանգում, որին հյուսիսից սահմանակից հարեւան է Մեծ ծովի հարավային ափերին ապրող կովկասյան Ճան կամ Ծան ցեղը, որի մերօրյա հեանորդը լազ ժողովուրդն է եւ հայտնի Ճանիկ կամ Զանիկ քաղաքը, որը ժամանակին հայտնի էր նաեւ որպես համշենահայերի հոծ բնակության կենտրոն: Եւ իրոք, ուշադիր ընթերցելու դեպքում նկատվում է, որ Մամիկոնյանների տոհմային ծագումնաբանական ավանդույթում ճենաց աշխարհից Հայաստան եկող նախնին՝ ճենագն Մամիկոնն իր նախահայրենիքի անվան մեջ պահպանել է ճանաց աշխարհի հետքը՝ որպես ճանագն Մամիգո: Կարծես արդեն ուրվագծվում է Հայքում նոր տոհմի հաստատման պատմությունը:

Տրդատ Գ., ըստ երեւույթին, հռոմեական աշակցությամբ տեր է կանգնում Մծբնի պայմանագրով ճանաչված իրավունքին՝ ժառանգելով թագավորական գահը ամբողջ Հայքում: Երկրի կայունացմանն ու ուժեղացմանն ուղղված մի շարք միջոցառումներից մեկի մեջ ներքաշվում են ոչ միայն ծայրագույն սահմանային, այլեւ երբեմն նրանց հարեւան տարածքներն ու ուժերը: Վերջիններս, այդ թվում եւ ճանական իշխանական տոհմերից մեկը իրենց տեղական կամ այլ բնույթի փոխադարձ շահերից ելնելով, զինուժով հանդերձ ծառայության են անցնում Տրդատ Գ.-ի գորքում, իսկ հետագայում իրենց նվիրվածության շնորհիվ արժանանում են արքունական պաշտոնների ու շնորհների: Ահա ճանական մի գերդաստան կամ իշխանական տոհմ Հայոց արքունիքին ծառայագրվելու արդյունքում ձեռք է բերում կալվածքներ հարեւան Տայքում եւ արքայական կարգադրությամբ հաստատվում որպես նախարարական տուն: Նոր լեզվական միջավայրում այլեթնիկ նորեկ ընտանիքը կամ համայնքը հաճախ անվանակոչվում է նրան բնորոշ լեզվական որեւէ հատկանիշով կամ հաճախ հնչող որեւէ արտահայտությամբ: Իսկ ահա նոր լեզվական միջավայրում ճանագն ընտանիքի հորն ուղղված դիմելածեղ գիտակցաբար թե անգիտակցաբար նրանց հայկական միջավայրում ընդունվել է իբրեւ նրա հատուկ անուն՝ Մամիգո, մի բան, որ անպակաս չէ նաեւ արդի համայնքներ-

րի կյանքում¹⁰։ Ստացվում է, որ տոհմի ծագումնաբանական պատմության հիմքում դրված է մի ընտանեկան ավանդություն, որը պահպանել է որոշակի պատմական հիշատակներ տոհմական մեջ (Մամ-իգո), նախահայրենիքի անվան մեջ (Ճեն←Ճան) և նոր հայրենիքի հետ ինտեգրվելու մեջ (Տայք)։

Այսպիսով, Ճանիքից եկած, հարեւան Տայքում ժառանգական կալվածքների տեր դարձած, Հայոց արքունիքում ծառայագրված և նախարարական նոր տուն հռչակված Մամիկոնյան գերդաստանի տոհմաբանական ավանդույթը Դ. դ. վերջերին դեռ շատ քիչ էր տարբերվելու պատմական իրականությունից։ Հնարավոր է, որ ներտոհմային շրջանակներում ու տոհմապատկան գյուղերում բանավոր պատմում էին սույն ավանդությունը՝ վիպական բանահյուսության ոճով երկատելով նախնի հերոսին և երկու եղբայր դարձնելով՝ Մամիկ և Կոնակ, ինչպես նաև ճոխացնելով հերոս եղբայրների սխրանքներն արքունական ծառայության մեջ կամ ռազմական արշավների ժամանակ։ Հավանաբար՝ ոչ ավելին։

Այլ էր, սակայն, իրավիճակը հատկապես Ե. դ. II քառորդից սկսած, երբ Մամիկոնյանները ձեռք են բերում պետական-հասարակական բարձր դիրք ու հեղինակություն, որը գնալով աճում է Արշակունյաց գահի կործանումից հետո և դառնում առաջնորդի անվիճելի հատկանիշը հայ հասարակության աչքին։

Հասկանալի է, որ Ե. դ. օրավուր աշխուժացող դերակատարումը հայոց քաղաքական կյանքում գուգահեռաբար պետք է ծներ սեփական տոհմի ծագումնաբանական նոր տարբերակի պահանջ, որը պիտի բավարարվեր նախ բանավոր եղանակով։ Մանավանդ որ Ե. դ. երկրորդ կեսին այդ բանավոր նոր պատմի տարածմանը նպաստում էր նաև Հայոց Եկեղեցին՝ համախոհ հոգեւոր-մտավորական շրջանակներով։

Տոհմաբանական պատմության նոր տարբերակում (Ե. դ.) արդեն ջնջվել էր Մամիկոնյան տոհմի բարձր դիրքին անհարիր ճանական-գավառական ծագման հետքը. ճանազն նախնու փոխարեն արդեն հանդես են գալիս ճենազն երկու եղբայրները՝ ճենաց աշխարհի (Չինաստանի) արքունիքից, ովքեր իրենց հայրենիքը լքում և Հայք են գալիս վերոնշյալ հանգամանքների ազդեցությամբ (տե՛ս այուժեի տարբերակների համեմատական տախտակը)։ Աշխարհի ամենամեծ երկրի թագավորական ընտանիքից սերվելն ավելին է, քան Հայքում սպարապետ կամ մարզպան լինելը։ Հայ իրականության մեջ տոհմային լեգենդի նոր տարբերակով վավերացվելու էր Մամիկոնյանների սպարապետական իրավունքը։ Մնում է, որ այդ ամենը շարադրվեր գրավոր՝ որպես հայոց պատմության ամբողջական հայեցակարգ։ Եւ պատվերը չի ուշանում։

¹⁰ Օրինակ՝ Տավուշի մարզի Գետահովիտ գյուղում ամուսնացած ռուս կնոջ դիմելածեն իր առաջնեկ որդուն՝ СЫНОК, ընկալվել է իբրև նորածին Ռոբերտի հատուկ անուն, և մինչև օրս գյուղը նրան կոչում է Սենոկ։

Ե. դ. 60-ական թթ. Փավստոս Բուզանդը, ստանձնելով Մամիկոնյանների տված պատմագրական պատվերը, գրեց «Պատմություն Հայոց»՝ Լաբուբնայի եւ «Ազաթանգեղայ պատմութիւնը» ամբողջացնելով սկզբից (I-II դարություն) եւ վերջից (III-VI դարություն): Առաջին դարությունը՝ հայոց նախնական պատմություն կոչվածը, մասամբ մեզ է հասել Փավստոսի գրքից դուրս ընկնելուց հետո, Սեբիոսի «Պատմության» կազմում, միջին պատմությունը Փավստոսը չի գրել, որովհետեւ ուրիշների կողմից գրված էր, միայն թե նշվել է իբրեւ պատմագրական պատի շարվածքում դրված մեկ աղյուս, որ պատմությունը թերի չերեւա, իսկ ահա III-VI դարությունների շարադրանքում ներկայացնում է մի եռահերոս պատմություն (թագավոր, կաթողիկոս, սպարապետ), որում հեղինակի համակրանքը վայելող իսկական հերոսներն են Գրիգոր Լուսավորչի հետնորդ կաթողիկոսները եւ Մամիկոնյան տոհմից սերած սպարապետները: Իհարկե, վերջին Արշակունուց շուրջ 30 տարի անց հեղինակային նման տեսակետը հասկանալի է: Կարելի էր, սակայն, այն է, որ Փավստոսը, ի մտի ունենալով Համազասպ Մամիկոնյանից իր Վարդան որդուն անցած սպարապետական պաշտոնավարումը եւ հենվելով ներտոհմային բանավոր ավանդույթի վրա, հանգիստ խղճով շրջանցում է առաջին անգամ Մամիկոնյանների իրական սպարապետացման փաստը Դ. դ. վերջերին՝ Սահակ Կաթողիկոսի միջնորդությամբ, եւ սպարապետի պաշտոնը ներկայացնում է իբրեւ նրանց ժառանգական իրավունք՝ սկսած Արտավազդ, ապա Վաչե Մամիկոնյաններից մինչեւ Դ. դ. վերջ՝ Մանվել Մամիկոնյան, այսինքն՝ Տրդատ Մեծից մինչեւ Վարազդատ եւ Արշակ Արշակունի թագավորները, մինչեւ Մեծ Հայքի բաժանումը:

Փաստորեն, պատմագրական պատվերի գլխավոր առանցքը Մամիկոնյան տոհմի սպարապետական իրավունքի «պատմական» վավերացումն է Դ. դ. սկզբից, այդ իրավունքի հերոսական իրացումն է՝ ի փառս սեփական տոհմի եւ թագավորական իշխանության, վերջապես հայրենիքի առաջ Մամիկոնյանների, առավել քան թագավորների, ունեցած վաստակը ցուցադրելն է, որը եւ պատահական չէ, որովհետեւ նրանք ոչ պակաս պատվական են իրենց ծագումով ու անցյալի պատմությամբ: Խոսքը տանք Փավստոս Բուզանդին, որը Պապ թագավորի եւ Մուշեղ Մամիկոնյան սպարապետի միջեւ հրահրված հերթական գժտությունից հետո ներկայացնելով Մուշեղի ինքնարդարացման խոսքերը Պապի առաջ՝ գրում է. «Թագաւորն Պապ իբրեւ լսէր զբանս զայս, յարտասուս հարեալ եւ յարուցեալ ի գահոյիցն, բուռն հարկանէր զՄուշեղէ, արկանէր զնովաւ գիրկս եւ լայր ի վերայ պարանոցին Մուշեղի, եւ ասէ. Մահապարտ են այնոքիկ, որ իշխեն խոսել չարութիւն զՄուշեղէ զառնէ քաջէ եւ զպատուականէ: Զի այր՝ որ ազգաւ պատուական է իբրեւ զմեզ, եւ նախնիքն դորա իբրեւ զնախնիսն մեր, եւ թողեալ նախնեացն դորա զթագաւորութիւնն ճենաց աշխարհին, եկեալք առ մեզ, նախնիքն ի նախնեացն մե-

րոց ի վերայ կեցեալք եւ մեռեալք են, եւ հայր սորա ի վերայ հօրն իմոյ մեռաւ, եւ սա միամտութեամբ մինչեւ ի մահ վաստակեալ է...»¹¹:

Ընդգծված տողերից երեւում է, որ Փավստոսից առաջ արդեն բանավոր եղանակով հասարակական մտայնության էր վերածվել Մամիկոնյանների արքայական ծագման նոր վարկածը, որը Դ. դ. վերջին ու Ե. դ. սկզբներին դեռեւս չկար եւ, հավանաբար, ծլարձակել էր Ե. դ. II քառորդում Վարդան Մամիկոնյանի սպարապետության օրոք: Մի բան պարզ է, որ չինական ծագումնաբանությունը Փավստոսի հորինածը չէ եւ արտածված է բանավոր ավանդույթում եղած ճանձնեւ բառափոխումից: Փավստոսը գրի չի առել Մամիկոնյանների տոհմաբանական պատմությունը, բայց նրանից օգտվել է՝ վկայակոչելով տոհմի չինական արքայական ծագումը: Այս վկայակոչումն իր պատասխանն է ստացել Խորենացու «Պատմության» մեջ, որտեղ պատմահայրը փորձել է ավելի ստուգապատում դարձնել Մամիկոնյանների տոհմաբանական ավանդությունը (II, գլ. 2Ա., 2Գ. - տե՛ս էջ 31), հատկապես այն, որ տոհմի նախնին մեկն էր (Մամգոն), ով Չինաստանում ոչ թե արքայորդի, այլ դայակորդի էր ու այնտեղից փախել է մահապատժի պատճառով եւ Հայքում էլ մեծ դիրքի է հասել հանցագործությամբ: Խորենացուն այս հարցում պիտի պատասխաներ Ղազար Փարպեցին, բայց նա այս թեմային չի անդրադառնում, ուստի երկու դար անց, երբ թեման նորից հրատապ էր, պատասխանողի պարտականությունը պատվիրատու Մամիկոնյանների կողմից դրվում է Սեբիոսի վրա, ինչի մասին վերը խոսվեց: Սակայն Ղազար Փարպեցին Ե. դ. վերջին պարտավոր էր պատասխանել մի այլ հարցի. ճիշտ էր արդյոք Խորենացին, երբ գրում էր, որ Սահակ Պարթեւը մերժել է իր թոռների ժառանգական իրավունքը կաթողիկոսական աթոռի նկատմամբ: Հիշենք պատմահոր սուրբգրային բառերը, որ հնչեցրել է նախարարների շուրթերից. «Հարկ է գալ գայթակղութեանն, բայց վա՛յ այնոցիկ, ընդ ոյր ձեռն գայցե...» (III գլ. ԿԶ.): Ե. դ. վերջին, երբ Վահանի շնորհիվ Մամիկոնյանները հասել էին փառքի գագաթը, հարկավոր էր վավերական ուժ հաղորդել կաթողիկոսական պաշտոնը ժառանգելու նրանց մղումներին, հարկավոր էր մեկընդմիշտ օրինականացնել եւ ժառանգական իրավունքի ուժով օժտել ամբողջ Ե. դ. II կեսին չմարող նրանց կաթողիկոսական հավակնությունը: Դրան առաջինը խոչընդոտողները ոչ միայն ընդդիմադիր նախարարներն ու հասարակական կարծիքն էր, այլեւ Մովսես Խորենացու «Պատմության» մեջ բերված՝ Սահակ Պարթեւի «Տեսիլն» էր, որով ժառանգորդման իրավունքին դեմ էր ինքը՝ ժառանգորդման աղբյուր Սահակ Կաթողիկոսը:

11 Փաստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, բնագիրը՝ Թ. Պատկանյանի, թարգմ. եւ ծան.՝ Ստ. Մալխասյանի, Երեւան, 1987, V դպր., գլ. Դ., էջ 304, 306:

РЕЗЮМЕ

Из представленного в ряде очерков исследования текста «Истории Себиоса» можно выделить как новые сведения, так и старые «истины» в новом подтверждении.

1. Предисловие и основная часть «Истории Себиоса» написаны одним и тем же автором.

2. По мнению автора история есть процесс осуществления пророчества Даниила, который начинается с Вавилона. Четыре звери в Данииловом Видении поочередно символизируют те четыре этапа, через которые мир рвется к гибели. Тут и проявляется смысл первой строки: написать историю с особой целью, а не исходя из произвольных нужд профессионального «исследователя».

3. Историограф - очевидец изложил историю своего времени начиная с конца VI в. до 661 г. - описывая, как обещает в предисловии, грядущие бедствия, упомянув годы и дни «пяти царей».

4. Автор подчеркнув «пять царей» - имеет ввиду современные ему правители Ирана: Хосров Парвез, Кават, Арташир, царица Ббор, Яздикерт.

5. Автором известного под названием «Истории Себеоса» текста является епископ Багревандский Себиос (VII в.).

6. «История» Себиоса имеет двухчастную структуру и пять составных частей, которые следуют друг за другом не по принципу времени написания, а по хронологии содержания: I памятная запись, II предистория и хронологические списки, III список содержания и краткая предистория, IV основная история, V эпилог-послесловие. По времени написания эти составные образуют такое чередование: IV, III, II, V, I.

7. Анализ памятной записи показывает, что автор употребляет принятое в свое время метод источниковедческой фальсификации, чтобы источник выглядел древнее и правдоподобнее.

8. Себиос вел скрытую полемику с Хоренаци, и сведения «Истории» Мараба Мцурнаци черпал через «Историю Армении» Павстоса Бузанда. Это означает, что первая глава «Истории» Павстоса в VII в. еще не была утрачена.

9. Себиос в отличие от Хоренаци генеологию рода Багратидов связывает с армянским патриархом Гайком. По этому у Себиоса Багратиды лишены царского происхождения, а возвышающий их царь Валаршак был снят с арены, и первым же вместо него Аршакуни был объявлен Аршак.

10. В последствии некий грамотный писец, обнаружив противоречие с текстом Хоренаци, на основе историографа Степаноса Асогика добавляет III главу.

11. Политический дух межкняжеской борьбы диктует Себиосу написать новую родословную о происхождении Мамиконидов из китайской императорской семьи, по этому то и они в Армении приняли от Трдата Великого наследственный титул спарапета.

12. В действительности же Мамикониды имели не китайское а лазское (чанское) происхождение (ср. Ченастан = Китай, Чанастан = Лазистан). А первый раз в Армении стал спарапетом из рода Мамиконянов зять католикоса Саака Амазасп Мамиконян не без его помощи.

13. Как единственные наследники католикоса Саака, его внуки Мамиконяны во второй половине V в. боролись за католикосский трон.

14. Историограф Себиос при правлении католикоса Нерсеса Мамиконяна Ишханци (область Тайк) получил историографический заказ от армянского князя Амазаспа Мамиконяна – написать новую «Историю Армении» как альтернативу на Хоренаци.

SUMMARY

The present series of studies yield the following information and conclusions:

1. The Foreword to the History of Sebios' and the main body of the History itself were produced by the same hand and were composed by the selfsame author.

2. In the view of this author, history itself is the process of the realization of the prophecies of Daniel, with Babylon as its point of departure. The four beasts of the Danielic vision sequentially symbolize the four historical stages through which the world continues its path to destruction.

This is the significance of the opening lines of the Foreword, namely the principle of writing history with a specific purpose, and not as a result of the willful needs of a skilled investigator like Movses Xorenats'i.

3. The historian, as an eyewitness to the events, narrates the history of his times, commencing towards the end of the sixth century, up to the year 661, and describes, as promised in his Foreword, the disasters of his times, the mentioning the corresponding years of the five kings.

4. Numerous theories have been proposed regarding the five kings, and these have been situated in various centuries, starting with the third century.

5. The author of the renowned History attributed to Sebeos is none other than the seventh-century Bishop of Bagrewand, Sebios.

6. The History of Sebeos has a two-part structure: the first ends in 649-50, and the second in 660/1. The whole work can be broken down to five components: Colophon I; chapter One: Primary History and chronological lists; chapters I-VI,³: a list of contents short prehistory; chapters VII-IX,⁴: History proper; chapters X-XLVI,⁵:

conclusion and ending; chapters XLVII-LII. Arranging these components in chronological order, we arrive at the following scheme: 4-3-2-5-1.

7. A close study of the colophon reveals that Sebios has resorted to the accepted method of some manipulation of sources in order to render his chronological data more credible.

8. Silently disputing Khorenats'i, Sebios nevertheless culls the information originating in Marabas from P'awstos before the latter's first chapter was lost.

9. Contrary to Khorenats'i, Sebios traces the origins of the Bagratids to Hayk, clearly reflecting the interests and patronage of the Mamikonids. This is why Sebios deprives the Bagratids of foreign royal descent, removes king Vagharshak from the scene (as the personage associated with their rise), rendering king Arshak an Arsacid.

10. A future learned copyist, noticing the contradiction with khorenats'i's account, portrayed king Vagharshak as joint-king to king Arshak, and taking Step'anos Asoghik as a basis for his account, subsequently added the third chapter of Sebios, which has reached us without its original ending.

11. Clan competition results in Sebios composing a new genealogy for the Mamikonids showing their descent from the royal dynasty of the Chen, and thereby rightfully the owning the hereditary role of Sparapet through the decree of Trdat the Great.

12. In fact, the Mamikonids stem not from the Chen but from the Chan race, which inhabited north of Hayk' towards the Black Sea, bordering the area which was to become the domain of the Mamikonids. The first to become sparapet was Hamazasp Mamikonian, who was appointed with help of his father-in-law Sahak Partew, followed by Vardan, Vahan and others.

13. During the second half of the fifth century the Mamikonids were struggling to occupy the Catholicosial throne and render it hereditary.

14. During the pontificate of Nerses Tayets'i, Sebios of Bagrewand, as bishop of a province belonging to the Mamikonids, was commissioned by prince Hamazasp Mamikonian to write a new 'History of the Armenians' as an alternative to that of Khorenats'i. This explains why Sebios attaches the Primary history (commencing with Hayk and Bel), but due to haste and brevity, achieved a patchwork of historical compilation rather than a solid close-knit history.

15. During the seventh century, the house of the Kamsarakans also joined the competing princely houses.